



Զահրատ

Զրոյց

Այս կողմերը տեղ մը պզտիկ սկիզբ մը կայ

Մեր այս կողմերը ոչ մէկ սկիզբ կայ

Ամէն ինչ շատոնց սկսեր է հոս

Բայց ես կ'իմանամ թէ զիս կը կանչէ

Պզտիկ սկիզբ մը որ կը կայծկլտայ

Ադամանդի պէս

Ադամանդ որուն բազմատաշ դէմքին

Գոյացման հրաշէկ արեւն է ինկեր

Կանչեր կը լռեն

Իմ խողովեան սեմէն շատ հեռու

Տեսողութենէս մղոններ անդին

Կայծեր կը մարին

Սկիզբ մըն է աս ուժանակի պէս

Պայթելու պատրաստ

Հոս անշարժութեան ծոցն է ամէն ինչ

Ոչ մէկ բան ինքինք կը վերստեղծէ

Բայց ես կ'իմանամ թէ զիս կը կանչէ

Պգտիկ սկիզբ մը որ կը հեծկլտայ
Ու տէր մը կ'ուզէ
միլիոն խոստումով
Միլիոնաբարբառ
Չերօ մը անկեր
Չերօ մը ատակ միլիոն դառնալու

Միլիոնն հաւասար է հոս գերոյի
Ոչ մէկ բան ինքզինք կը բազմապատկէ

Այս կողմերը տեղ մը պէտք է որ ըլլայ
Պգտիկ սկիզբ մը որ կ'անհամբերի
Ես զինքը վաղուց ուզեր եմ ճանչնալ
Կամ զիտեմ ես զայն առանց ճանչնալու
Գիտեմ թէ սաղմն է ան լինելութեան
ՈՒ հոս է հիմա

Այստեղ ժխտումն է ամէն նորութեան
Չոր թէ ան ըլլայ պտուկ ինքնակամ
Նախ ծիլ յետոյ ոստ ու ծառ դառնալու
Այստեղ ոչ մէկ բան կը վերընծիւղի

Օրօրոց յոյսի
Մեկնակէտ յոյսի

Այստեղ մերժումն է հանգրուաններուն
Ոչ մէկ բան ինքզինք կը վերարծարծէ

Մութ է այստեղ մութ բայց խորշէ մը մութ
Կը լսեմ կու լայ սկիզբն անտերունջ
Ան որ կարծեցի թէ իմս էր միայն
Ան որունն ըլլալ կարծեցի միայն

Չոր թէ ան ըլլայ սկիզբն ամէնուն
Հոս մոայլ վերջեր կը թեւածեն խոյ
Ոչ մէկ բան ինքզինք կը վերսկսի

Այս կողմերը տեղ մը պզտիկ սկիզբ մը կայ
Գիտե՞ս թէ ուր է

Մեր այս կողմերը ոչ մէկ սկիզբ կայ
Ամէն ինչ շատոնց սկսեր է հոս

Բայց ես կ'իմանամ թէ իս կը կանչէ
Պզտիկ սկիզբ մը որ կը կայծկլտայ
Աղամանդի պէս
Աղամանդ որուն բազմատաշ դէմքին
Գոյացման հրաշէկ արեւն է ինկեր